

---

## ԳԵՐՄԱՆԱՑԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՆԵՐԻ ՎԱՐՁԱԳԻԾԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

### ԳԵՎՈՐԳ ՄԵԼքոնՅԱՆ

Առաջին աշխարհամարտի տարիներին Հայոց ցեղասպանության և հայության նկատմամբ Կայսերական Գերմանիայի դիրքորոշման ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է Օսմանյան կայսրությունում գերմանական հյուպատոսների գործունեության վերհանումը, քանի որ վերջիններս տարածաշրջանում գերմանական պաշտոնական քաղաքականության իրականացնողներն են: Գերմանացի դիվանագետների՝ հայերի կոտորածների վերաբերյալ կատարած փաստագրումները կարևոր են այն առումով, որ ցեղասպանության իրականացնում նաև իրավունք ունենալու մասին խոսում են Օսմանյան կայսրությանը դաշնակից պետության ներկայացուցիչները և փաստերը խեղաքութելու որևէ պատճառ չունեին, եթե չասենք, որ այդ իրադարձությունները նրանք փորձում են հնարավորինս մեղմ ներկայացնել: Մյուս կողմից, գերմանացի դիվանագետների գործունեության ուսումնասիրությունը մեզ հնարավորություն կընծերի ամբողջական պատկերացում կազմելու արևմտահայության և արևելահայության նկատմամբ Գերմանիայի քաղաքականության մասին: Միայն գերմանական դիվանագիտական ներկայացուցիչներին էր թույլատրված իրենց տեղեկությունները ծածկագրված հաղորդել, և դրանով ապահովված էր գաղտնիությունը թուրքերից:

Դեռևս 20-րդ դարի սկզբից Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում ակտիվ գործունեություն էին ծավալել գերմանական հյուպատոսությունները, որոնք, ի հակառակություն ռուսական ազդեցության, ձգտում էին հայերի շրջանում մեծացնել Կայսերական Գերմանիայի հեղինակությունը և տեղեկություններ տրամադրել Կ. Պոլսի գերմանական դեսպանատանը Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում և տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին: Արևմտյան Հայաստանում 20-րդ դարի սկզբից ակտիվ գործունեություն էին ծավալել Տրապիզոնի և Մոսուլի գերմանական հյուպատոսությունները, որոնք Օսմանյան կայսրությունում գերմանիայի ածող ազդեցության պայմաններում չեն կարող բավարարել Թուրքիայի արևելյան շրջաններում գերմանամետ քաղաքականության պահանջները: Գերմանական հյուպատոսարաններին զուգահեռ Արևմտյան Հայաստանում ակտիվ գործունեություն էին ծավալել գերմանացի միսիոններները: Դեռևս 1898 թ. գերմանիայում ստեղծվել էր «Գերմանական արևելյան միություն» (Deutsche Orients Mission), որի միսիոններները 20-րդ դարի սկզբից սկսեցին ավելի ակտիվացնել իրենց գերմանամետ քարոզչությունը Արևմտյան Հայաստանում: Առաջին աշխարհամարտի նախօրյակին նրանք Դիարբեքիրում, Խարբերդում, Մարաշում, Վանում, Մուշում, Մալաթիայում, Գարունիում, Երուսաղեմում, Մեզերում, Սվասում, Մարզվանում և այլ վայրերում ակտիվ գործունեություն էին ծավալել հայերի շրջանում: 1913 թ. օգոստո-

սին Գերմանիայի կառավարությունը էրզրումում բացեց հյուպատոսարան, որի ստեղծման գլխավոր նպատակներից մեկը արևմտահայության շրջանում գերմանական ազդեցության մեծացմանն ուղղված աշխատանքների իրականացումն էր և ռուս-թուրքական սահմանին տեղի ունեցող իրադարձությունների մասին անմիջական տեղեկություններ հավաքելը<sup>1</sup>: Նոր հյուպատոսարանը դեկավարում էր Էդգար Անդերսը, որը նինչ այդ դիվանագիտական գործունեությամբ աչքի էր ընկել Ռուսաստանում, Պարսկաստանում և Կ. Պոլսում: Այն փաստը, որ գերմանական կառավարությունը նման փորձառու դիվանագետ էր նշանակում էրզրումում Գերմանիայի հյուպատոս, ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե Գերմանիան որքան մեծ կարևորություն էր տալիս հայության շրջանում գերմանական ազդեցության մեծացմանը և ռուս-թուրքական սահմանին կատարվող իրադարձություններին, որոնք կարևոր նշանակություն ունեին գերմանական արևելյան քաղաքականության իրականացման համար: Համամիտ չենք պատմաբան Ս. Հակոբյանի այն տեսակետին, թե իբր Անդերսը էրզրումում իր կողմն էր գրավել և գործակալ դարձրել դաշնակցական կուսակցության հայտնի անձանց, որոնք նրան էին տրամադրում կարևոր տեղեկատվություն և կազմակերպված պայքար էին մղում ռուսական ազդեցության դեմ<sup>2</sup>. Ըստ Ս. Հակոբյանի՝ նրանցից հատկապես աչքի էր ընկնում նախկին ուսուցիչ, դաշնակցական Սոգուկյանը, որը իբր համոզում էր հայերին հույսը չդնել Ռուսաստանի վրա, այլ հավատալ միայն Գերմանիային<sup>3</sup>: Գերմանացի հյուպատոսները և դիվանագիտական ներկայացուցիչները հաճախ հանդիպումներ և քննարկումներ էին ունենում տարբեր բնագավառների հայ գործիչների հետ, ինչը ևս մեկ անգամ հաստատում է գերմանական իշխանությունների՝ հայերի հետ լավ հարաբերություններ հաստատելու և գերմանամետ ուժեր ձևավորելու քաղաքանության նպատակառուղղվածությունը: Այլ հարց է, որ գերմանական կառավարության ներկայացուցիչներին Առաջին աշխարհամարտի նախօրեին և պատերազմի ընթացքում այդպես էլ չհաջողվեց իրենց կողմը գրավել հայ քաղաքական հայտնի և ոչ մի ուժի, որը հայերի համար ծանր հետևանքներ ունեցավ, հակառակ պարագայում Կայսերական Գերմանիան շահագրգուված կլիներ մեղմելու հայության նկատմամբ երիտրուրքերի կողմից իրականացվող կոտորածները և տեղահանումները: Մյուս կողմից, եթե Անդերսին, ինչպես նշում է Հակոբյանը, իսկապես հաջողվել էր իր կողմը գրավել դաշնակցական հայտնի գործիչների, ապա հարց է առաջանում, թե ինչու 1914 թ. էրզրումում կայացած դաշնակցության ժողովի ժամանակ համաշխարհային պատերազմում Կայսերական Գերմանիային սատարելու վերաբերյալ նշված գործիչների կողմից որևէ առաջարկ չարվեց: Սակայն ինչպես աշխարհամարտի նախօրեին, այնպես էլ ընթացքում գերմանական կառավարությունը հրաժարվեց Արևմտյան Հայաստանում նոր հյուպատոսարաններ բացելու մտադրությունից, որի պատճառը կարող ենք գտնել 1915 թ. ապրիլի 15-ին ռայխսկանցլեր Բեթման Յոլվեգին Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմի գրած գեկուցագրում, որտեղ կարդում ենք.

<sup>1</sup> Տես Ակոպյան Ս. Западная Армения в планах империалистических держав в период Первой мировой войны. Еր., 1967, էջ 48:

<sup>2</sup> Տես նույն տեղը, էջ 48:

<sup>3</sup> Տես նույն տեղը:

«...Կառավարության օդակներում հայերի հանդեպ այնքան անբարենպաստ տրամադրվածությունը ավելի է սահմանափակում հայերի օգտին արվող մեր միջամտությունը և հորդորում է լինել առավել ուշադիր: Հակառակ դեպքում, հանդես գալով երկի թե անհեռանկար գործի համար, մենք կվտանգենք մեզ համար ավելի կարևոր և ավելի մոտ շահերը: Ուստի ես կարծում եմ, որ այդ առնչությանը գերմանական հյուպատոսությունների ակտիվ ավելցումը՝ այսպես կոչված գերմանական գավառներում, չեր կարողանա ծառայել իր նպատակին: Դրանում Բարձր դուռը ավելի շատ կտեսնի մեր կողմից իր իշխանություններին հսկելու փորձ, ինչպես ժամանակին Անգլիան, իսկ վերջերս Ռուսաստանը՝ հյուպատոսության ներկայացուցիչներին ուղարկելով, փորձում էին երկրի այդ մասերում հսկել հայկական բարեփոխումները: Այդպիսի միջոցառումը պիտանի կլիներ իշխանություններին հայերի դեմ հանելու և հակառակ արդյունքի հասնելու համար»<sup>4</sup>: Վերլուծելով Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի գեկուցագիրը՝ կարող ենք փաստել. Արևմտյան Հայաստանում գերմանական նոր հյուպատոսարանների բացումը չեն ողջունում թուրքերը, և ինչպես նկատում է դեսպանը, կարող էր դիտվել որպես միջամտություն Օսմանյան կայսրության ներքին գործերին: Թուրքերը, չնայած Գերմանիայի հետ ունեցած դաշնակցային հարաբերություններին, դեմ էին հայարձնակ նահանգներում գերմանական ազդեցության մեջացմանը, որը հետագայում կարող էր հանգեցնել հայերի օգտին գերմանացիների միջամտությանը: Գերմանական կողմը, կարևորելով թուրքերի հետ դաշնակցային հարաբերությունները, հայերի պատճառով չեր ցանկանում սրել հարաբերությունները երիտրութերի դեկավարության հետ, իսկ հայերի օգտին միջամտելը Վանգենհայմը անհեռանկար էր համարում, ինչը նշանակում էր, որ գերմանացիները քաջատեյյակ էին հայերին տեղահանելու և կոտորելու երիտրութերական ծրագրերին: Ուստի նոր հյուպատոսությունների բացումը Արևմտյան Հայաստանում, որտեղից հայ բնակչության տեղահանումներն ու կոտորածներն արդեն սկսվել էին, նպատակահարմար չգտնվեց Գերմանիայի դեկավարության կողմից: Այն փաստը, որ գերմանական կառավարությունը ձգտում էր հայարձնակ նահանգներում ավելացնել իր հյուպատոսությունները և այն դարձնել իր ազդեցության տարածաշրջան, ցույց է տալիս, թե որքան մեծ կարևորություն ուներ Արևմտյան Հայաստանը Կայսերական Գերմանիայի համար:

Իսկ ի՞նչ արեցին գերմանացի հյուպատոսները աղետը կանխելու համար և արդյո՞ք նրանք կարող էին արգելել երիտրութերի կողմից իրականացվող կոտորածների և տեղահանության ծրագրերը: Այս հարցադրումների պատասխանները հայ պատմագրության համար շարունակում են արդիական մնալ, քանի որ գերմանական նորահայտ փաստաթթերը հնարավորություն են ընձեռում ավելի մանրանասն ծանոթանալու գերմանացի հյուպատոսների գործունեությանը: Գերմանացի յոթ հյուպատոսներ ականատես եղան և փաստագրեցին ցեղասպանության իրողությունը, նրանք էին՝ Հայնրիխ Բերգֆելդը (Տրապիզոն), Օյգեն Բյուգեն (Ալբանա), Յերման Յոֆմանը (Ալեքսանդրետ), Վալտեր Յոլշթայնը (Սոսուլ), Մ. Զուքհոֆը (Սամսուլ), Մաքս Էրվին ֆոն Շոյբներ Ռիխտերը (Երգորում), Վալտեր Ռյուզերը

<sup>4</sup> Վ. Գուստ, Հայերի 8եղասպանությունը 1915-1916, Եր., 2008, էջ 168-169:

(Հալեայ): Թավրիզի հյուպատոս Վիլիելմ Վիտեն Պոլիս վերադառնալու ճանապարհին ևս ականատես է եղել հայերի կոտորածներին<sup>5</sup>: Ենշտ է նկատում պատմաբան Ս. Ստեփանյանը, որ գերմանացի դիվանագետները դեռևս աշխարհամարտի սկզբից պարզ տեսնում էին հայերի տեղահանության և կոտորածների երիտրութական ծրագրերը<sup>6</sup>: Այդ մասին է վկայում դեռևս 1914 թ. դեկտեմբերի 5-ին Էրգրումում գերմանական հյուպատոս Շվարցի հաղորդագրությունը. «...Էրգրումի վիլայեթի հայ բնակչությունը, հատկապես գյուղացիությունը, անհանգստացած են որոշ դեպքերի պատճառով, որոնք ընկալվում են նոր կոտորածների նախանշան»<sup>7</sup>: Գերմանացի հյուպատոսները համամիտ չեն բուրքերի այն պնդումներին, թե հայերի տեղահանությունը ռազմական անհրաժեշտություն է: Այդ մասին Էրգրումի հյուպատոս Շոյբերը 1915 թ. հունիսի 2-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանատունում ուղարկած գեկուցագրում նշում էր. «Բանակի գլխավոր հրամանատարի հետ հայերի արտաքսման մասին իմ բանակցությունները դրական արդյունք չունեցան: Նայ բնակչությունը բոլոր դաշտավայրերից և, ըստ երևույթին, նաև Էրգրումից, պետք է աքսորվի Դեյր Էլ Զորի ուղղությամբ: Այս մեջ ծավալի աքսորը հավասարազոր է կոտորածների, քանի որ փոխադրական միջոցների պակասության պատճառով աքսորյալների հազիվ կեսը կհասնի նշանակման վայրը... Ռազմական բնույթի պատճառաբանություններն անհիմն են, որովհետև տեղական բնակչության ապստամբությունները բացառված են»<sup>8</sup>: Սակայն Օսմանյան կայսրությունում գտնվող բոլոր հյուպատոսները պարտավոր էին հետևել Կ. Պոլսի գերմանական դեսպանատան հրահանգներին, որոնցից մեկում հայերի տեղահանության հարցի առնչությամբ ասված էր. «Մայիս 31-ին Էրգրումի, Մոսուլի, Աղանայի, Յալեպի ու Բաղրադի հյուպատոսությունները տեղեկացվել են այն մասին, որ հայերի լրտեսության ու զանգվածային ապստամբությունների կանխման համար այլ միջոցառումների հետ, ինչպիսիք են հայկական դպրոցների փակունը և այլն, որոշվել է՝ ոչ բոլորովին անմեղ ընտանիքներին՝ այն ժամանակ ապստամբած կենտրոններից անցկացնել Միջագետք... մենք, նկատի ունենալով Թուրքիայի քաղաքական ու ռազմական իրավիճակը, ոչ թե հիմնավորապես խանգարելու, այլ միայն փորձելու ենք մեղմել կատարումը: Այդ ինաստով արդեն նախապես մայիսի 19-ին ու 21-ին, Էրգրումի ու Աղանայի հյուպատոսություններն իրենց հարցման վերաբերյալ հստակ կարգադրություններ են ստացել: Էրգրումի հյուպատոսությունը, ի դեպ, հանձնարկած էր հայերի օգտին իրենց միջնորդությանը տալ բարեկամական խորհրդի տեսք՝ պաշտոնական դեմարշի բնույթ չունենալու համար: Յունիսի 21-ին նույն հյուպատոսությանը հրահանգված էր վալիին եռանդուն բողոքներ ներկայացնել ընդդեն հայ տարագիրների ջարդի, քանի որ այդպիսի միջադեպերը կօգտեն թուրքական կառավարության վարկը արտասահմա-

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 15:

<sup>6</sup> Տե՛ս Степанян С. Германские источники о геноциде армян. Период Первой мировой войны. Том 1. Еր., 1991, էջ 202:

<sup>7</sup> Ա. Օհանջանյան, 1915 թվական. Անհերթելի վկայություններ (Ավատրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Եր., 1997, էջ 202:

<sup>8</sup> Յ. Լեփսիուս, Գերմանիան և Յայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր I, Եր., 2006, էջ 190:

նի չեզոք երկրներում ու իրենց բարեկամների շրջանում և կխարիվեն իրենց հշխանությունների հեղինակությունը»<sup>9</sup>: Այս հաղորդագրությամբ Կ. Պոլսի Գերմանիայի դեսպանատունը պաշտոնապես տեղեկացնում էր իր հյուպատուսներին, որ քաղաքական ու ռազմական նկատառումներից ելնելով՝ նրանք չպետք է խոչընդոտեն հայերի տեղահանումը և կոտորածները, այլ փորձեն միայն մեղմել դրանք: Հյուպատուսների կողմից հայերի օգտին միջանտությունները և բուրքերին այդ հարցում բարեկամական խորհուրդներ տալը ևս համաձայնեցվում էին Կ. Պոլսի գերմանական դեսպանատան հետ: Երգրումի հյուպատուսին՝ հայերի օգտին թուրք վալիի նոտ բողոքներ ներկայացնելու գերմանական կենտրոնական դեսպանատան հրահանգը ոչ թե հայերին փրկելու, այլ միջազգային հանրության առջև Կայսերական Գերմանիայի և Օսմանյան կայսրության հետինակության պահպանման նպատակ էր հետապնդում: Հյուպատուսները, հետևելով Կ. Պոլսից ստացված հրահանգներին, ամեն կերպ փորձում էին մեղմ ներկայացնել հայերի նկատմամբ բռնությունները: Այդ է հաստատում 1915 թ. դեկտեմբերի 17-ին Տրավիզոնից ուղարկված գեկուցագիրը: Այս մասին Ա. Օհանջանյանը գրում է. «Դատկանշական է այստեղի և երգրումի գերմանական հյուպատուսների դիրքորոշումը հայերի հայածանքների վերաբերյալ: Երկուսն էլ ակնհայտորեն ջանում են հերթել հատկապես բազմաթիվ սպանությունների փաստը»<sup>10</sup>: Ըստ Գուստի՝ «Արտգործնախարարության պատասխանատունները իրենց պաշտոնական հայտարարություններում ցեղասպանությունը ներկայացնում էին շատ տարբեր՝ առավելապես հանգստացնելով և շատ դեպքերում՝ ստելով»<sup>11</sup>: Կ. Պոլսի գերմանական դեսպանատան նման քաղաքականությունը գորեք առանց բացառության (չհաշված դեսպան Վոլֆ-Մետերնիխին), շարունակվեց Առաջին աշխարհամարտի ամբողջ ընթացքում: Գերմանական դեսպան Վանգենհայմը, ի պատասխան Շոյբներ-ՈՒխտերի 1915 թ. մայիսի 18-ի գեկուցում կատարված հարցումի, թե «Տարագիր հայերի թշվառությունը սարսափելի է: Խնդրում են հրահանգել, թե արդյոք այդ պատճառով կարող են գերազույն հրամանատարության հանդեպ քայլեր ձեռնարկել», մայիսի 19-ին գրել է. «Ներկայացված հանգամանքներում Ուլք իրավասու եք այստեղի գերազույն հրամանատարությանը բողոքել տեղահանված հայերի առնչությամբ, եթե ռազմական նկատառումներով անհնար է արգելել այդ միջոցառումները»<sup>12</sup>: Վանգենհայմը, ըստ այդմ, հյուպատուսին հարհանգել է. «Զեր ազդեցությունը պետք է պահել բարեկամական խորհրդի սահմաններում՝ խուսափելով պաշտոնական դեմարշի բնույթից»<sup>13</sup>: 1915 թ. ապրիլի 28-ին Վանգենհայմը երգրումի հյուպատուսին գրել էր. «...Պետք է խուսափել այն տպավորությունից, թե իբր մենք ուզում ենք օգտվել հայերի իրավունքները պաշտպանելու իրավունքից և միջամտել իշխանությունների գործունեությանն ու հարկ եղած դեպքում դա

<sup>9</sup> Կ. Գուստ, նշվ. աշխ., էջ 428:

<sup>10</sup> Ա. Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 223:

<sup>11</sup> Կ. Գուստ, նշվ. աշխ., էջ 95:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>13</sup> Նույն տեղում:

շեշտել իշխանությունների ներկայությամբ»<sup>14</sup>: Այս փաստաթղթերը ևս մեկ անգամ հաստատում են հետևյալ իրողությունը. գերմանացի հյուպատոսներին հստակ հանձնարաված էր հայերի հարցում չեզոք դիրք բռնել և այդ հարցում թուրքերի մոտ հանդես գալ բարեկամական խորհրդի սահմաներում, ինչը նշանակում էր, որ նրանք պետք է լուր հանդուրժեին հայերի տեղահանությունները և կոտորածները: Համամիտ չենք հյուպատոսների մասին Գուստի հայտնած այն կարծիքին, համաձայն որի՝ «Այդ գերմանացիները ոչ միայն ուշադրություն չեն դարձնում Թուրքիայի հետ քաղաքական ու ռազմական դաշինքի հզոր հրամայականներին, փաստագրում էին ոչ միայն ցեղասպանության անհերքելի փաստերը, այլև պարտավորված էին զգում հակադրվել նաև որպես պատասխան իրենց վերադասներին հղած թուրքական իշխանությունների համապատասխան բողոքներում ու մեղադրանքներում հրապարակված սպանության ակցիաների հերքումների հոսքին»<sup>15</sup>: Որպես սավածի հաստատում՝ Գուստը բերում է Տրավիզոնի հյուպատոս, թուրքամետ կողմնորոշում ունեցող Բերգֆելիի հնչեցուած «զանգվածային սպանություններ» և «հայերի բնաջնջում» արտահայտությունները, ինչը չի նշանակում, որ Բերգֆելիը համամիտ չի եղել նման միջոցների կիրառմանը, իսկ որպես հյուպատոս դեպքերը փաստագրել պարտավոր էր:

Դեռևս Արաջին աշխարհամարտի տարիներին Անտանտի Երկրների մամուլում հրապարակվեցին հողվածներ, որոնցում գերմանացի որոշ հյուպատոսներ մեղադրվում էին հայերի կոտորածներին ակտիվ մասնակցելու համար: Անգլիական և Ֆրանսիական մամուլում (Times, Westminster Gazette, Martin, Յավասի՝ սեպտեմբերի 30-ի հերագիրը) Յալեպում գերմանացի հյուպատոս Ռյոսլերը մեղադրվում էր Յալեպից Այնթապ գնալու և «այնտեղի ջարդերը անձամբ դեկավարելու համար»: Անգլիայի Լորդերի պալատում «ամերիկացի ականատեսների գեկուցագրերի հիման վրա» լորդ Գրեյը, որպես Գերմանիայի մեղսակցության անուղղակի ապացույց, հաղորդել է, որ «...գերմանական հյուպատոսության պաշտոնյաները Փոքր Ասիայում ոչ միայն դրդում, այլև ակտիվորեն ոգևորում էին ոճագործությունները»<sup>16</sup>: Կահիրեից «Թայմսին» հաղորդում են. «Գերմանացի հյուպատոսներից ունանք դեկավարում կամ խրախուսում էին հայերի կոտորածները: Յենց Յալեպի գերմանացի հյուպատոս Ռյոսլերը մեկնել էր Այնթապ, որպեսզի անձամբ դեկավարի ջարդերը, իսկ Վատահամբավ բարոն Օպենհայմը<sup>17</sup> առաջարկել էր դաշնակիցների կանաց և Երեխաներին տեղափոխվել Ուրֆա»<sup>18</sup>: Սակայն Գերմանիայի արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից կարող ենք փաստել, որ հյուպատոս Ռյոսլերի հասցեին ուղղված այս մեղադրանքներն անհիմն և դաշնակից Երկրների

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>16</sup> Յ. Լեփսիուս, նշվ. աշխ., էջ 67:

<sup>17</sup> «Ուրֆայում կոհվեներն սկսվելուց առաջ թուրքական կողմից մինչ այդ Յալեպում և այլ քաղաքներում տեղավորված թշնամական Երկրների քաղաքացիներին (ֆրանսիացիներ, անգլիացիներ, իտալացիներ) բերեցին Ուրֆա: Բարոն Օպենհայմին կշտամբում են, որ նա խորհուրդ է տվել նրանց բերել այստեղ, որպեսզի նրանք տեսնեին այնտեղի արյան բաղնիքը» (Յ. Լեփսիուս, նշվ. աշխ., էջ 315):

<sup>18</sup> Յ. Լեփսիուս, նշվ. աշխ., էջ 315:

կողմից հակագերմանական քարոզության արդյունք էին: Ռյուսլերը այն փոքրաթիվ գերմանացի դիվանագետներից էր, որ իր գեկուցագրերում մշտապես բարձրացնում էր գերմանական իշխանությունների կողմից հայերին աջակցելու անհրաժեշտությունը և օբյեկտիվ տեղեկատվություններ էր հաղորդում տեղահանվածների կացության մասին: 1915 թ. հուլիսի 27-ին Ռյուսլերը ռայխսկանցլեր Բերման-Շոլվեգին ուղղված գեկուցագրում գրում էր. «...Նայ ժողովողի հանդեպ նկարագրված վերաբերմունքը, ըստ իս, բացի այլ նկատառումներից, արժանի է նաև գերմանական կողմի հատուկ ուշադրության.... Մի թե հնարավոր չեր լինի արդեն իինա դադարեցնել հետագա կոտորածները և փրկել գոնե Նալեաի վիլայեթի ծովակնյա շրջանի հայերին, որոնց աքսորը դեռ առջևում է»<sup>19</sup>: Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Շայնրիխ Բերգֆելդը հավանություն էր տալիս հայերի տեղահանմանը անգամ 1918 թ. Վերջին: 1918 թ. նոյեմբերին Բերգֆելդը գրել է. «Պատերազմի սկզբում՝ հայերի պահվածքի ու հայացքների պարագայում, նրանց տեղահանումը, ընդ որում՝ ոչ միայն տղամարդկանց, այլև ամբողջ ընտանիքների, ըստ իս, ռազմական անհրաժեշտությունից բխող միջոցառում էր»<sup>20</sup>: Ըստ նրա՝ «Արևելքի յուրաքանչյուր գիտակ կիամաձայնի ինձ հետ, որ հայերը հազիվ թե ունենան մարդկայնորեն համակրելի որևէ հոգեգիծ»<sup>21</sup>: 1915 թ. հուլիսի 25-ին Բերգֆելդը ռայխսկանցլեր Բերման-Շոլվեգին ուղղված գեկուցագրում գրել էր. «Տրապիզոնի հայերին տեղահանելուց հետո շուտով լուրեր տարածվեցին, թե արդեն սկսվել է նրանց ջարդը, որ նրանց ճանապարհին զուգահեռ հոսող Դեհրմենդերն գետը, որը Տրապիզոնից սկսած մոտ 100 կմ հոսում է դեպի Երկրի խորքը, գետաբերանը և քաղաքի մերձակայքը լցված են դիակների կույտերով և այլն: Փորձը վկայել է, որ թուրքերի հանդեպ թշնամական երևակայությունը Տրապիզոնում ամենաանհավանական ծաղկունքն է ապրում: Այդ իսկ պատճառով կայզերական հյուպատոսությունը այդ լուրերն ընդունեց մեծ վերապահությամբ.... Ըստ այդմ՝ ես անհիմն են համարում Տրապիզոնից տեղահանված հայերի հանդեպ կատարված վայրագությունների մասին բոլոր ասեկուսեները և հակված են ենթադրելու, որ ճանապարհին մեռած հայերն իրենց վերջը գտել են ինքնասպանությամբ կամ հիվանդություններից»<sup>22</sup>: Այս փաստաբերի ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ Տրապիզոնում գերմանական հյուպատոսի կողմից ռայխսկանցլերին ուղղված գեկուցագիրը հայերի կացության վերաբերյալ չի համապատասխանում իրականությամբ, և դա հետևանք էր ոչ թե փաստերի անտեղյակության, այլ դրանք հյուպատոսի կողմից խեղաթյուրելու ակնհայտ ցանկության: Մենք ունենք Տրապիզոն կատարած ուղևորության մասին ֆոն Շոյբների հանձնարարությամբ Կարլ Շլիմեի 1915 թ. օգոստոսի 5-ի հաղորդագրությունը, որը բացահայտում է 1915 թ. հուլիսի 25-ին ռայխսկանցլերին Բերգֆելդի ներկայացրած գեկուցագրում հայերի վերաբերյալ փաստերը խեղաթյուրելու իրողությունը: Այնտեղ գրված է. «...Տրապիզո-

<sup>19</sup> Վ. Գուստ, նշվ. աշխ., էջ 257:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 96:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 253-254:

նից մարդկանց քշել էին սարսափելի դաժան ձևով, նրանց չեն թողել ոչ մի բան վաճառել կամ հետները վերցնել: Վերադարձի ճանապարհին՝ Տրավիզոնից մինչև Զևսլիկ, տեսա ավելի քան 20 տղամարդու դիակ՝ ջրում կամ ջրի մոտ... Ինչպես ինձ հայտնեցին թուրք գյուղացիները, Տրավիզոնից եկող տղամարդկանց մեծ մասին՝ մինչև Գեմիշանեհ, ճանապարհին սպանել են»<sup>23</sup>: Տրավիզոնի հայերի դաժան տեղահանման մասին Կ. Պոլսի գերմանական ռազմական առաքելությանը 1915 թ. օգոստոսի 23-ին ավագ լեյտենանտ Շտանգեն հայտնել է. «...Տրավիզոնում՝ տեղահանման հրամանն ստանալուց հետո, հայերին նույնիսկ արգելել էին իրենց սեփականությունից ինչ-որ բան վաճառել կամ հետը վերցնել: Այստեղի հյուպատոսության ծառայողը՝ գերմանացի կամավորական Շլիմեն Տրավիզոնում անձանք էր տեսել, թե ինչպես են շարժային ոստիկանական պահակակետի կողքով անցնող տարագիրներից խել նրանց խղճուկ կապոցները»<sup>24</sup>: Գերմանացի հյուպատոսների նման չեզոք դիրքորոշումը նախևառաջ պայմանավորված էր հայերի նկատմամբ Կայսերական Գերմանիայի պաշտոնական դիրքորոշմամբ: Կ. Պոլսի գերմանական դեսպանատան՝ հայերի վերաբերյալ հյուպատոսներին ուղարկած հանձնարարականում նշված էր. «...Հայկական հարցում մեր տեսակետը եղել է այն, որ առաջնորդվելով ռազմական շահերով ու երկրի ներքին ապահովությամբ, թուրքական կառավարությունն իրավունք ուներ ձեռնարկել բացառիկ միջոցառումներ, որոնք կարող են համարվել պաշտպանության համար անհրաժեշտ, ինչպես օրինակ՝ հայկական բնակչության բնի տեղահանումը ռուսների ներխուժման և ֆրանսիական ու անգլիական նավատորմների գործողությունների սպառնալիքների շրջաններից»<sup>25</sup>: Սակայն Գերմանիայի դեսպան Վանգենիայնը 1915 թ. հուլիսի 7-ին ռայխսկանցլերին ուղարկած գեկուցագրում խոստովանեց. «Հայ բնակչության տեղահանումն ու վերաբնակեցումը մոտ 14 օր առաջ սահմանափակվեց արևելյան ռազմաբենի հարևան գավառներով և Աղանա գավառի մի քանի շրջաններով: Դրանից հետո Բ. դուռը որոշեց այդ միջոցառումները տարածել նաև Տրավիզոն, Մամուլեթ-ուլ-Ազիզ և Սվագ գավառների վրա և սկսեց իրականացնել, թեպետ այդ երկրամասերում առայժմ թշնամական ներխուժման ոչ մի սպառնալիք չկա»<sup>26</sup>: Հետևաբար, Օսմանյան կայսրությունում գործող գերմանացի դիվանագետները քաջ գիտակցում էին, որ հայերի տեղահանության վերաբերյալ թուրքերի առաջ քաշած «ռազմական նկատառումները» չեն համապատասխանում իրականությանը:

Այսպիսով, Օսմանյան կասրությունում գործող գերմանացի հյուպատոսները Առաջին աշխարհամարտի ողջ ընթացքում հայերի տեղահանության ու կոտորածների վերաբերյալ իրականացրեցին կարևոր փաստագրումներ, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայոց ցեղասպանության ուսումնասիրնան և ճանաչնան համար: Իսկ աղետը կանխելու նպատակով հյուպատոսները որևէ էական քայլերի չդիմեցին, բացի իրենց թուրք

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 273-274:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 319:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 428:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 98:

դաշնակիցներին «բարեկամական խորուրդներ» տալուց և «քողոքներ» հայտնելուց, ինչը պայմանավորված էր Կայսերական Գերմանիայի պաշտոնական քաղաքանությամբ: Ուստի հյուպատոսները հայերի տեղահանության և կոտորածների կանխման համար որևէ իրավասություն և հնարավորություն չունեին: Գերմանացի հյուպատոսների և դիվանագետների շարքում գտնվեցին սակավաթիվ գործիչներ, որոնք ամեն ջանք գործադրում էին ցեղասպանությունը կանխելու և հայության փրկված հատվածը սովոր և համաճարակներից փրկելու համար:

**ГЕВОРГ МЕЛКОНЯН – Отношение германских консулов к армянскому геноциду.** – В годы Первой мировой войны немецкие дипломаты зафиксировали множество крайне важных фактов, относящихся к массовому истреблению армян в Османской империи. Тем не менее, они не предприняли никаких мер, чтобы защитить армян от депортаций и резни. Дело в том, что консулы на местах получили на этот счёт конкретные указания от своего посольства в Константинополе. И всё-таки, невзирая на позицию официальных представителей Германии, во время геноцида нашлись немецкие граждане и общественные деятели, которые не только публично осудили преступную политику Турции, но и пытались облегчить судьбу армян.

**GEVORG MELKONYAN – The Behavior of German Consuls toward the Armenian Genocide.** – The issue being discussed in this article concerns the German diplomatic officers' position on the Armenian Genocide during World War I in the Ottoman Empire. During this period the German diplomats made extremely important records about the Armenian Genocide, but didn't take any essential measure, because they had received concrete instructions from the German embassy in Constantinople. In spite of this, during the genocide there were German diplomats who strongly condemned the Turks' policy of genocide.